

սեր թագաւորութեան 50ամեայ յորեւելանն է այս տարի . . . :

Գաղթիս: Անցեալ ամիսներու պայքարներէ ու յուզումներէ ետքը համեմատաբար հանդարտ է այս տրուութիւնն ալ. միայն Ալէքը կը շարունակուին խռովութիւնները:

Ռուսիս: Վերջապէս ընդունել տուաւ Չինաստանի իր պահանջումները: Պորոտ Արթուրի նաւահանգիստը 25 տարւան համար — վարձեց. նոյնպէս Տալէն — Վան նաւահանգիստն անցաւ՝ նոյնչափ ժամանակի համար, Ռուսաստանի ձեռքը: Պետրովսկէն սկսեալ մինչեւ վերոյիշեալ երկու նաւահանգիստները պիտի շարունակուին երկամիութեայ շինութիւնը: — Կրետէին ինդոյն մէջ գուշակուած “յետս նահանջումը”, որչափ կ'երեւայ, շատուզուեցաւ, եւ Գէորգ իշխանը պիտի հաստատուի՝ ըստ Կուրգոնի “յայտնի-զաղտնապահութեան”, իւր կուսակալ Կրետէի, որուն ջրերէն բաշտեցաւ գերմանական դրօշը եւ Ապրիլ 15ին պիտի քաշուի աստրիականը:

Չինաստան: “Եղբայրաբար բաժնեցէք զիս”, կ'ըսէ այս ընդարձակածաւալ տէրութիւնը, եւ իսկին շահակցի տէրութիւնները գործի ձեռնամուկի կ'ըլլան: Գերմանացոյն առած մասը ծախսօթ է, Ռուսիայի առնելքը տեսնաք, Գաղղիա երրորդ “պահանջատէրը”, կը ներկայանայ, ժապոն արդէն ունի իւր մասը, կը մնայ Եանկին ու Ալիոնը, որոնք կը պատրաստուին գործով հաստատելու գաղ. առածը. *„Rira bien qui rira le dernier“*.

Միացեալ-Նահանգք եւ Սպանիա: Պատերազմի ծայր կը գործնայ, թէպէտ որչափ կ'երեւայ, աւելի աղմուկ է քան իրականութիւն . . . : Սպանիական հանդարտութիւնն եւ այնպիսի “վիթլարի”, տէրութեան մը սպառնալիքներուն ցոյց տուած աներկիւղութիւնը, մուստանջութիւն կը պատճառէ Եանկիններու “ծանրագլուխ մասին”, թէ մի գուցէ եւրոպական այլեւայլ տէրութիւնները օգնութեան հասնին Սպանիայի այս անիրաւ պատերազմին մէջ. եւ այս շատ հաւանական է, քանի որ Միացեալ-Նահանգներն “անկուշ”, եւ քիչ մի — “շահաւէր”, միջնորդներ կը նկատուին, թէպէտ ի Կուբա թա-

փուած արիւնը կ'արդարացնէ՝ գոնէ ըստ մեզ, այս միջնորդութիւնը:

Մերթիս եւ **Բուլգարիս:** Յարաբերութիւնները շատ ձգտեալ են եւ երկակողմանի պատրաստութիւններ կը տեսնուին: Վերջապէս Բալկանեան թերակղզին չկոտցաւ իւր խաղաղութիւնը գանձել եւ կը նկատուի միշտ՝ ապագայ աշխարհաւեր պատերազմի մը “լուցիկի մթերանոցը”:

Յունաստան: Յունաց թագաւորին՝ իւր կրած դաւաճան յարձակմանէն ազատութիւնը, արթնցոց կարծեց անտարբեր տէրութեանց համակրութիւնն այս փոքրիկ ազգին վրայ: Երեք մեծ տէրութեանց՝ Ռուսիայի, Անգլիայի եւ Գաղղիայի երաշխաւորութեամբը, պիտի հայթայթուի պատերազմի տուգանքը եւ Յունաստանի պիտի կարենայ դարձեալ շունչ առնուլ:



ՔՐԻՍՏՈՒՆԻԿԱՆ ԴՆԵՍԻՆՆԵՐ

ՌԻՍՏՈՒՆԵԱՅԸ

ԼԵՃՈՒՄԱՆԱՆԱՅԸ — Եւրոպիոյ Հայոց գաւառաբարքաւը. 97: — Հաւաքածոյ Թրանսիլուանիոյ Հայոց գաւառական բառերուն. 105:

ՀՆԱՅՐԱՅԸ — Ալեքսի մը հայ հնագրութեան վրայ (պատկերազարդ). 106:

ՄԱՏԵՆԱՅՐԱՅԸ — Եղնկայ “Եղծ կոմ” ընդդէմ պաշտօնք, գործոյ յօրինման ժամանակն ու վաւերականութիւնը: 110:

ՄԱՏԵՆԱՅՐԱՅԸ — “Եղբայրական օգնութիւն”.

114: — “Ներկարգութիւն հոգեւորական վարուց Յովսափաւ որդւոյ թագաւորին Հնդկաց. գրեալ Յոհաննու կրթանաւորի”, 115:

ԱՆԵՆԻԱՆԸ

ՆՈՐ ՀԱՏԱՅՐԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ. 118:

ԱՋԳԱՅՈՒ ԹԵՐԹԵՐԸ ԺԱՂՆԻՓՈՒՆՆԵՐ — 1. Շատ ուշ, Գր. Ա. Ժերեթիւ: — 2. Յ տարին արտասանութիւնը: — 3. Բարեկամի մը քաղը: — 4. Ուսանողաց օգնութիւն: — 5. Գր. Մ. Յ. Սն-թեան՝ Անգլոմ ԲՆԶԱԿԻ աթապական ընկերութեան: — 6. Հայ գիտնական մը եւ ուսանողների Գարիս — 7. Երկու միջանակ: — 8. Գ. Տիգրան Է. Զ. Զուհանն: — Օգտակար գիտելիքներ. 124:

ԲԱՆԻԱՅԸ ԵՎ ՏԵՆԻՐԻՆԵՐ

ՀՐԱՅՐԱՅԸ ԵՎ ԴՆԱՅՐԱՅԸ ԴՆԱՅՐԱՅԸ ԴՆԱՅՐԱՅԸ

Դ. ԲԱՅԱՆԵԼ Կ. ԳԱՐՈՆՆԵՐ

ԴԵՆԵՆԸ, ՄԻՐԻՐԱՐԵՆԸ ԵՎ ԳԱՐՈՆԸ.